

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՏՎԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիներին մեծ հետաքրքրություն են հանդես բերում Աստվածաշնչի հատուկ անունների նկատմամբ թե՛ արտասահմանում, թե՛ Ռուսաստանում¹, մինչդեռ հայ լեզվաբանության մեջ Աստվածաշնչի հատուկ անունների մասին գուտ բանասիրական տեսական հետազոտություններ գրեթե չկան:

Բանասեր Հակոբ Անասյանի «Հայկական մատենագրություն» աշխատության Բ հատորի(Երևան, 1976) «Աստվածաշունչ մատյան» հոդվածից երևում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության հատուկ անունները տառադարձական, ուղղագրական, քերականական ուսումնասիրության նյութ չեն դարձել:

Մինչ այսօր հայագետներին հուզող խնդիրը *Աստվածաշնչի* հայերեն թարգմանության բնօրինակի հարցն է, որը ըստ ամենայնի մեկնաբանված չէ. դրա պատճառն անշուշտ հայերեն Սուրբ Գրքի գիտահամեմատական տեքստի բացակայությունն է և հայերեն թարգմանության՝ օտար բնօրինակի(կամ բնօրինակների) անհայտությունը: Այս առումով շնորհակալ գործ է կատարում Երևանի Մատենադարանը, որն այսօր ևս հրատարակել է *Ծննդոց, Ելից, Ղևտացոց, Մակաբայեցոց, Երկրտառան մարգարեից* գրքերի բնական բնագրերը, որոնցում ամենայն մանրամասնությամբ ներկայացված են մեզ համար այնքան կարևոր հատուկ անունների տարրնթերցումները՝ ըստ լավագույն ձեռագրերի ընձեռած նյութի²:

Աստվածաշնչի հատուկ անունների քննության համար ձեռքի տակ ունեցել ենք երեք հայերեն թարգմանություններ. նախ՝ *Աստվածաշնչի* գրաբար այն օրինակը, որը 1997թ. հրատարակվել է Երևանում՝ 1895թ.

¹ Ռուս հատկանվանագետները վերջին ժամանակներում հրատարակել են *Симфония к синодалному изданию Библии (Свет на Востоке, Коринташи, Илустрируй перевода Библии, Стокгольм, 1995г.)*, *Библейско-биографический словарь (сост. Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Москва, 2000)*, *Энциклопедия Библийская (2-е издание, Москва 2004)* և այլ բազմաթիվ գրքեր:

² *Գիրք Ծննդոց, Զննական բնագիր աշխմբ.* Ա.Ս.Ջեյրումյանի, Ե., 1985, *Գիրք Մակաբայեցոց, քնն. բնագիր աշխմբ.* Հ.Մ.Ամալյանի, Մատենադարան, Ե. 1996, *Գիրք երկրտառան մարգարեից, քնն. բնագիր աշխմբ.* Հ.Մ.Ամալյանի, Մատենադարան, Ե. 2000:

Կոստանդնուպոլսում տպագրված և 1929թ. Վիեննայում վերահիստարակված օրինակի հիման վրա՝ «*Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց*»: Հրատարակության առթիվ գրված ներածականում ասվում է. «Սա հռչակաւոր *«Թարգմանութեանց թագուհի»՝ Սահակմեսրոպյան Ոսկեղնիկ Սուրբ Գիրքն է*»: Պայմանականորեն այս օրինակը անվանել ենք Ա-1: Ա-2 օրինակը արևմտահայերեն հրատարակություն է՝ «*Աստուածաշունչ գիրք Հին եւ Նոր կտակարանաց երբայական եւ յունական քննգիրներն թարգմանուած*» (1890թ., Կոստանդնուպոլիս): Ա-3 նմուշը Աստվածաշնչի 1994թ. արևելահայերեն նոր թարգմանության վերահիստարակությունն է՝ «*Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանների, արեւելահայերեն նոր թարգմանութիւն* » (Ս.Էջմիածին-Երևան, 1999թ.), որի թարգմանության համար հիմք է ընդունվել Արսեն Բագրատունու սլաոնաստած *Աստվածաշունչ*: Քանի որ Մ.Սեբաստացու հրատարակած *Աստվածաշունչը* /1733թ./ Ոսկան Երևանցու հրատարակած տպագրիւ առաջին *Աստվածաշնչի* /1666թ./ տարբերակն է՝ որոշ խմբագրական ու սրբագրական շտկումներով, ուստի իարկ եղած դեպքերում անդրադարձել ենք նաև դրան՝ այն տալով *ՄՄԱ* համառոտագրությամբ:

Անհրաժեշտության դեպքում դիմել ենք *Աստվածաշնչի* ռուսերեն և գերմաներեն թարգմանություններին, որոնց հետ համեմատությունը հաճախ անգնահատելի դեր է կատարում հատկապես հետևություններ ու եզրահանգումներ կատարելիս, որն է՝ *Новая Женевская учебная Библия* (Синодальный перевод), 1998 г./НЖБ/ և *Die Bibel in heutigem Deutsch, Gute Nachricht Bibel des Alten und Neuen Testaments*, Deutsche Bibelgesellschaft, 1992:

Անունների քննությունը համակոյմանխրեն ուսումնասիրելը, հարյուրավոր տարընթերցումների մեջ ճիշտ տարբերակը գտնելը ուղղակյորեն պարտադրում են նաև համեմատություն հունարեն *Յոթանասնից* թարգմանության հետ, այնպես որ մեր ձեռքի տակ եղած գրքերից կարևորագույնը հունարեն հռչակավոր *Septuaginta*-ն է³:

Անունների ուսումնասիրման հարցում մեզ հետաքրքրել են օտար աղբյուրների տեսակետները (ծագման, այտահայտած բառային խմաստի), ուստի հաճախ, հատկապես, եթե տեսակետները տարբեր են, տվել ենք նաև ժամանակակից օտար հեղինակների կարծիքներ՝ անպայման նշելով աղբյուրը: Իբրև օտար հավաստի աղբյուրների՝ ստուգաբանության համար

³ Η ΠΑΛΑΙΑ ΔΙΑΘΗΚΗ ΚΑΤΑ ΤΟΥΣ Ο' Septuaginta, Id est Velus Testamentum graece iuxta LXX interpretes edidit Alfred Rahlfs, Duo volumina in uno, Deutsche Bibelgesellschaft.

նկատի ենք ունեցել Ռ.Բեքհաուսի «*Աստվածաշնչի անձինք*» ուղեցույցը, ուսելեն հրատարակված բառարաններ և գրքեր՝

1. *Библейский словарь*, Эрик Нюстрем, перевод со шведского, под редакцией И.С.Свенсона, Санкт-Петербург, 1995.

2. *Библейско-биографический словарь...*, сост. Ф.И. Яшкевич, П.Я. Благовещенский, М., 2000.

3. *Энциклопедия Библейская* (2-е издание), Москва, 2004.

4. *Симфония к синодальному изданию Библии*, Свет на Востоке, Корнсталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995.

Աստվածաշունչը պարունակում է 5000-ից ավելի հատուկ անուն⁴։ Երևի քե պարզ է, որ հատուկ անունների նման հսկայական քանակը կարիք ունի մանրակրկիտ ուսումնասիրման, համակարգման⁵։

Հին Կտակարանը նախանշում է անվանակարգման սկիզբն ու ուղին. ինչպե՞ս և ինչու՞ անվանակոչվեցին մարդիկ և տեղանունները. սա մեր ուսումնասիրության ելակետային հարցերից մեկն է։

Իսկ հատուկ անունների ուսումնասիրման հիմքը դառնում է հենց *Աստվածաշունչը*, որը հազեցած է բառարանային-բացատրական մեկնություններով, ինչպես՝

Մամուէլ - Ա Թագ.Ա 20. «...եւ ծնաւ որդի, եւ կոչեաց զանուն նորա Մամուէլ, ասէ. Ձի ի Տեառնէ Աստուծոյ զօրութեանց խնորեցի զաս»։

Նեփթաղիմ - Ծն. Լ 8. «Եւ ասէ Ռաբել... Օգնեաց ինձ Աստուած, զի գումարեցայ ընդ քեռ իմում եւ յաղթեցի. եւ կոչեաց զանուն նորա Նեփթաղիմ, այսինքն՝ գուպարած իմ»։

Աբրահամ - Ծն. ԺԷ 5. «...եւ եղիցես հայր բազմութեան ազգաց. եւ ոչ կոչեսցի այսուհետեւ անուն քո Աբրամ, այլ եղիցի անուն քո Աբրահամ»։

Հատուկ անունների բացատրությունները, ինչպես ելևում է օրինակներից, ոչ այլ ինչ են, եթե ոչ պարզ քարգմանություններ եբրայերենից ասորերենի ու հունարենի միջոցով, իսկ Ժամանակյի գրիչներն ու բառարանագիրները չեն բավականացել *Աստվածաշնչում* տրված այս մեկնություններով, այլ իրենք ևս մեկնաբանել, բացատրել և այս ձևով միևնույն անվան բացատրությանը հավելվել են ուրիշ իմաստներ, և որքան ուշ է կազմվել որևէ բառարան, այնքան անունների ստուգաբանությունները շատացել են։ Իսկ եթե դրան էլ հավելենք՝ նաև այն, որ *Աստվածաշնչի* տալի-

⁴ Բազմիքը հայկազան լեզուի, Մխիթար Աբբա, հ1-2, Վեներտիկ, 1749-1769/ԲՀԼ, ԲՅԱ։

⁵ *Աստվածաշնչի հատուկ անունների բառարանները* գլխում մենք հանգամանակից անդրադարձել ենք այս բառարանին։

բեր հրատարակություններում՝ գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն, հատուկ անունները տարբեր կերպ են ներկայացված՝ մեկ թարգմանաբար, մեկ տարընթեցումներով ու տարբեր հոմանիշային մեկնություններով, ուրեմն պարզ կդառնա, որ Սուրբ Գրքի հատուկ անունները կարիք ունեն լուրջ և համակողմանի ուսումնասիրման ժամանակակից տեսանկյունից՝ օգտագործելով եղած հայերեն և այլալեզու գրականության, *Աստվածաշնչի* գրաբար, աշխարհաբար թարգմանությունների ընձեռած հնարավորությունները:

Մենք մեր աշխատանքում անդրադառնալու ենք հատուկ անունների ծագմանա-ստուգաբանական բացատրություններին և գուգադրական ու համեմատական քննությամբ փորձելու ենք վերականգնել առավել ճիշտ մեկնությունները:

Գ. Գասպարյանը «*Հայ բառարանագրության պատմություն*» զրքում⁶ գրում է. «*Հրեաների մոտ անուններն իմաստավորված էին, նրանք երբ գործ էին ածում Ալեդդամայ, հասկանում էին արյան գյուղ, և կապում Քրիստոսի արյան գնով(Հուդայի ստացած 30 արծաթը) ձեռք բերած գերեզմանատեղին, Սառա-իշխանուհի և այլն, իսկ փոխառնող լեզուներում այդ բառերը զրկվում էին իմաստավորումից*»/Էջ 26/» (ընդգծումը մերն է): *Աստվածաշնչի* գրաբար հնագույն ձեռագրերը աչքի են ընկնում հենց նրանով, որ խիստ նկատելի է հատուկ անունները, հատկապես տեղանունները ամեն կերպ թարգմանելու միտումը: Ուստի մենք այս հարցում համամիտ չենք հեղինակի վերջին մտքին և ուզում ենք հավելել հատկապես այն հանգամանքը, որ անունները թարգմանելու միտումը խոսում է հենց այն մասին, որ հայերեն գրաբար բնագիյը շատ հին է, այսինքն՝ թարգմանական ավանդույթ չի եղել, եղել է առակ Սուրբ Գրքի անադարտ պարզ վերարտադրում մեկ այլ լեզվով. ուրբան բնագլին հարազատ, այնքան ճիշտ: Միա այդ պատճառով էլ հաճախ նկատվում է հատուկ անունները թարգմանելու միտում: Մեր աշխատանքում մենք փորձելու ենք գուգադրական քննությամբ պարզել քե հատուկ անունները թարգմանաբար ներկայացնելը հա՞յ, հո՞ւյն, թե՞ ասորի թարգմանիչների ձեռքի գործն է:

Ըստ ընդունված կայծիլի՝ Սուրբ Գրքի վերջնական թարգմանությունը կատարվել է հունարենից (կամ ասորերենից), իսկ վերջինս՝ եբրայերենից: Մեր աշխատանքում համեմատական քննությամբ կփորձենք ցույց տալ, քե հունարենում ինչպես է ներկայացվում անունը և ինչպես է այն

⁶ Տես Գ. Կ. Գասպարյան, *Հայ բառարանագրության պատմություն*, Ե. 1968, էջերը՝ 5-563:

անցնում հայերենին, ինչ վերաբերմունք են ունեցել մեր առաջին թարգմանիչները հատուկ անունների նկատմամբ: Հետաքրքիրն այն է, որ ռուսերենում հատուկ անունը մնում է չթարգմանված, մինչդեռ հայերենում նույն անունը ներկայացվում է թարգմանված: Արդյոք դա մեր թարգմանիչների՞ նախաձեռնությունն է, թե՞ այդպես է տրված հենց *Յոթանասինգ*-ում: Բերենը մեկ-երկու օրինակ՝

«*Ծնոտ*»(συναγαν, συναγος), «*Աղբիւրն ծնոտի*»- Դատ. Ժե 19-20-ում, նկարագրելով Սամսոնի քաջագործությունները, խոսվում է մի քանի տեղանունների մասին, որոնք բոլորը կապվում են *Ծնոտ* անվանման հետ(անունը կապվում է էշի ծնոտի հետ, որն իր ձեռքն է վերցնում Սամսոնը և կոտորում բշմամիների)՝ «*Եւ երաց Տէր զծակ Ծնոտին, եւ ել ի մմանէ ջուր, եւ այր. եւ դարձաւ ոգի իւր առ ինքն եւ զովացաւ. վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Աղբեր անուանեալ Ծնոտի /տղտ./* երբ.՝ *Այնգորտ* (որ նշանակի *Աղբիւր կոչողին*)մինչեւ *ցայսօր*»: Գրաբարյի այս անվանումները նույնությամբ կրկնում է Ա-3 -ը՝ «*եկավ նա Ծնոտ կոչված վայրը*»/Меке, Lehi/14/, «*Եւ երբ իր խոսքը վերջացրեց, ծնոտը ձեռքից գցեց և այդ վայրը անվանեց Ծնոտի կոտորած*»/17/, «*Եւ Տերը Ծնոտ կոչվող վայրում մի անցք բացեց, նրանից ջուր դուրս եկավ, նա խմեց, ոգի առավ և զովացավ. այդ պատճառով դրա անունը դրեց Ծնոտի աղբիւրը*»/19/: Ա-2- ում բերվում է *Լեքի*. «*Երբոր անկիկայ մինչև Լեքի եկաւ*»/14/, «*եւ ան տեղին անունը Ռամաք լեքի կոչեց*»/Рамат-Лехи, Ramat- Lehi/17/, «*Անոր համար անոր անունը Ենգորտ/տղտ. կամ Ծնոտին/ ըստեցաւ, որ Լեքիին մէջ է մինչ օրս*»/Источник вызывающего, Rufferguelle/19/: ԲՅԱ-ում տրվում է *Ենդոր- աղբիւր* կամ *ակն ծննդեան* կամ *բնակութեան*, որը թերևս կապ չունի *Այնգորտ-Ենգորտ* անունների հետ, *Լեքի* անունը ԲՅԱ-ն չունի ընդհանրապես, ինչպես և չունի *Ծնոտ* անվանումը, թեև, իբրև կանոն, թարգմանված անունները նրա բառարանում տրվում են. կա *Ռամաք* բաղաբի անունը, որը ստուգաբանում է *բարձր* կամ *գերաբարձ*, բայց այս անունը չի հղվում Դատավորաց գրքում առկա *Ռամաք լեքի* ձևին, այս անունները բոլորը բացակայում են ԲԵ-ից, ՄԱԵ-ից, ԲՀ-ից, ՀՄԲ-ից, ուստի կարելի է եզրակացնել, որ անունների այս շարքը մնացել է քննությունից դուրս: Ի դեպ. ինչպես նկատեցինք, արևմտահայերեն Սուրբ Գիորը անունները չի թարգմանում և այս առումով նույնանում է ռուսերեն և գերմաներեն թարգմանությունների հետ. սա ոչ թե պատահականություն է, այլ ինչպես կտեսնենք նաև ընդհանուր աշխատանքում, բնորոշ առանձնահատկություն է, որն էլ խոսում է այն մասին, որ Ա-2-ի նախօրինակը բոլորովին այլ է եղել: Համեմատությունը խոնարենի հետ ցույց տվեց,

որ մեր քարգմանիչները նույնությամբ կրկնել են *Յոթանասնիցի* տեքստը և անվան բառացի քարգմանությունը գալիս է հենց նրանցից՝ *Ծնոտ- σιαχαν*:

Նույն ձևով՝ «*Աղբիւրն Նամակաց*» (Պղդղ Կրօմմատօն) - Հես. ԻԱ 29-ում Ա-1 գրաբայը տեքստը քարգմանաբար Ենգանյան քաղաքի անունը տալիս է *Աղբիւրն Նամակաց* (տղտ.՝ եբր.՝ Ենգանիմ) ձևով, արևելահայերեն օրինակում՝ «*Նամակաց աղբյուր*» ձևով, Ա-2/ արևմտահայերեն/ բնագիրը պահում է *Ենգանիմ*, ЖЗБ-ն՝ Ен-Ганним, գերմաներենում՝ դարձյալ՝ En-Gannim: Ա-1 և Ա-3 Աստվածաշունչ գրքերը գործածում են հունարենում տրված տարբերակի՝ *Պղդղ Կրօմմատօն* բառացի քարգմանությունը:

«*Դառնություն*»/ *Μερρα* - Ել. ԺԵ 23²-ում՝ «... եկին ի Մեռա, եւ ոչ կարէին ըմպել ջուր ի Մեռայն, քանզի դատն էր. վասն այնորիկ անուանեաց զանուն տեղոյն այնորիկ *Դառնութիւն*»։ արևմտահայերենում, ռուսերենում անունը չի քարգմանվում, այլ պահվում է *Մեռա* ձևը: Մ.Սերաստացու հրատարակած *Աստվածաշունչը* տալիս է անվան քարգմանված տարբերակը. «*վասն այնորիկ անուանեաց զանուն տեղոյն այնորիկ Դառնութիւն*», սակայն ԲՅԱ-ում բերում է *Դառն աղբիւրը* ձևը՝ այն իդիշով *Մեռայ* անվանմանը՝ մեկնաբանելով անվան նշանակությունը որպես *դառն կամ դառնութիւն* : *Յոթանասնիցում* ևս տեղանունը տրվում է եբրայական ձևով՝ *Μερρα* : Այնպես որ այս դեպքում տեղանունը բառացի իմաստով ներկայացրել են հայ քարգմանիչները:

Ինչպես տեսնում ենք, երկու հանգամանքն էլ առկա են, ուստի աշխատանքում նման դեպքեր շատ կքննարկենք համապատասխան տեղեյում:

Վարդան Հացունին իր «*Ռողազրություն եւ առուգանություն հայերենի*» ուսումնասիրության «*Փոխազրույթեան դրուբիւնը*» գլխում, ուրը նվիրված է հիմնականում դասական գրաբարի տառադարձությանը, գրում է. «...*նախնեաց իմաստուն գործերէն մի եղաւ՝ ոչ ձայնը, այլ իմաստը քարգմանել յատուկ անուանց, որոնք առանձին նշանակութեամբ մը տրտած էին անձանց, տեղեաց կամ իլուաց. Կեն(Պետրոս), Երեք քաղաք(Տրիպոլիս)...*» եւ այլն⁷:

Մեզ թվում է, որ անունների քարգմանությունը, ուր բավականաչափ զգալի է հատկապես Հին Կտակարանում, դառնում է առանցքային հարց, և ըստ էության, դրանով ևս հիմնավորվում է այն պարզ ճշմարտությունը, որ

⁷ Վ.Հացունի, *Ռողազրություն եւ առուգանություն հայերենի*, «*Փոխազրույթեան դրուբիւնը*» գլուխը, Կենետիկ, Ս Ղազար, 1933, էջ 298:

Սահակմեսրոպյան հայերեն թարգմանությունը հենքից մեկն է, և որպես այդպիսին, առավել հարազատ վերադարձվում է երբայական բնագիրը :

Աստվածաշնչի տարբեր՝ Ա-1, Ա-2, Ա-3 թարգմանություններում առկա են անունների և այդ անունները կրող անձների հետ կապված բազմաթիվ հակասություններ:

Երկու կանայք գրաբար/Ա-1/ և արևտահայերեն/Ա-2/ զրքերում անվանվում են *Թամնա* /Ա-1, Ա-2/1. Թամնա- Եսավյի ուղի Եղիփազի հարձ/ԾՆ. ԼՁ 12/, 2. Թամնա Սեթիյի ուղի Դտտանի քույր - /ԾՆ. ԼՁ 22/, ռուսերեն թարգմանությունը այս անունը նույնպես տալիս է *Фамна* երկու անձերին էլ անվանելիս, զերմաներենում երկու դեպքում էլ՝ *Тимна*. ՄՄԱ-ում գործածված է և՛ *Թամար* /ԼՁ 12/, և՛ *Թամնա* /ԼՁ 22/ տարբերակը, որի պես էլ արևելահայերեն/Ա-3/ զրքում անունը դարձել է մեկ *Թամար*, մեկ *Թամնա*: Անվան այս տարբերակումները ինչի՞ հետևանք են: Արայոթ սովորական փոխազդեցական հնչյունափոխության ալոյալ՞նք է սա, թարգմանական վրիպմա՞ն, թե՞ անունների պատահական համընկնման: ԲՅԱ-ն առանձնացնում է այս անունները՝ *Թամար* տարբերակը ստուգաբանելով մի քանի իմաստներով՝ *արմաւենի*, *արմաւ*, *փոփոխութիւն*, *դառնութիւն*. այս անունը հանդիպում է *Աստվածաշնչի Ծննդոց, Թագավորաց, Մնացորդաց* զրքերում, իսկ *Թամնա* անունը՝ *խափանեալ, արզեղեալ, կատարեալ, լրացեալ դրոշմում* իմաստներով. անունը գործածված է ոչ միայն նշված, այլև *Դատավորաց* և *Հեսուի* զրքերում: Տվյալ պահին էական չիսմարելով, թե այս իմաստներից որն է անունների ճիշտ մեկնությունը, համոզվում ենք, որ սրանք առանձին անուններ են, մինչդեռ արևելահայերենը տալիս է *Թամնա, Թամար*, որն անշուշտ ճիշտ չէ և բնագրի աղճատում է նշանակում: Հակված ենք կարծելու, որ այս դեպքում գործ ունենք գրիչների կողմից արտագրման վրիպակի հետ, քանզի *Յորանասնից*-ը երկու անձի դեպքում էլ տալիս է անվան նույն տարբերակը՝ *Թամնա- Թαμνα*:

Ոչ միայն Աստվածաշնչի տարբեր թարգմանություններում, այլև միևնույն զրքում առկա են անունների հետ կապված բազմաթիվ հակասություններ, ինչպես ԾՆ. Դ 18-ում՝ «...եւ ծնաւ Մայիէլ Մաքուսաղա, եւ Մաքուսաղա ծնաւ Ղամէք», մինչդեռ ԾՆ. Ե 21, 23-ում՝ «Եւ եկեաց Ենովք ամս հարեր վաթսուն և հինգ, եւ ծնաւ զՄաքուսաղա...Եւ եկեաց Մաքուսաղա ամս հարեր ութսուն և երեք, եւ ծնաւ Ղամէք»: Ինչպես նկատում ենք, նույն Մաքուսաղան մի դեպքում Մայիելի ուղին է, մեկ այլ դեպքում՝ Ենովքի:

Մեկ ուրիշ օրինակ՝ *Ելից*-ում Մովսեսի աները Հոագուելն է / Բ 18/, Գ 1-ում՝ Յոթորը, Թվ. Ժ 29-ում՝ Յոթաբը Հոագուելի ուղին :

Աստվածաշնչի քննական գործերը կազմվում են բազմաթիվ ձեռագրերի համեմատության հիման վրա, իսկ այդ համեմատությունը ի ցույց է դնում հազարավոր տարլընթերցումներ, մասնավորապես հատուկ անուններում դրանք այնքան շատ են, որ կարևորվում է այդ տարլընթերցումների մեջ գտնել հնարավոր ճիշտ տարբերակը: Բերենք մեկ օրինակ՝ Աստվածաշնչի *Գիրք Մակարայեցուց*-ի քննական բնագրում տրվում է *Փենէտ* անվան տարբեր ձեռագրերում հանդիպող տարլընթերցումները՝ *Փենենս*, *Փենէէզ*, *Փենենեզ*, *Փենենս*, *Փենէես*, *Փենենէզ*, *Փենէէս*, *Փենենէս*, *Փենենէս*⁸: Ա-1 և Ա-3 գրքերը տալիս են *Փենէէս*, իսկ Ա-2-ը /արևմտահայերեն/ *Փենէէս* և *Փենէէս*: *Յոթանասնիցք* բոլոր գործածություններում տալիս է անվան մեկ տարբերակ՝ *Փινεες*: Պետք է անայայնադրեն նկատի ունենալ նաև այն համգամանքը, որ այս անվամբ Աստվածաշնչում հանդես եկող տարբեր անձինք են եղել՝ տարբեր ժամանակներում ապրած, տարբեր հեղինակների կողմից տարբեր գրքերում ներկայացված՝

*Փենենս*¹/ *Փινεес*/արմյն.՝ *Փենէէս*/Եղիազարի ողբի, Ահարոնի թող-Ել. Զ 25/*զՓենէէս*/, Թվ. ԻԵ 7«...Եւ տեսեալ Փենենսի որդոյ Եղիազարոս», 11, 3եւ. ԻԲ 13, 30, 31, ԻԴ-33², Դատ. Ի 28 և այլն:

*Փենենս*²/Հեղիի ողբի/արմյն.՝ *Փենէէս*/- Ա Թագ. Ա 3, Բ 34. «...ի վերայ երկոցում որդոցն ըոց Ուինեայ եւ Փենենսի», Ա Թագ. ԺԴ 3. «Եւ Աբիա որդի Աբիտովբեայ եղբոր Բաբիելի, որդոյ Փենենսի, որդոյ Ղեեայ քահանայի Աստուծոյ...»:

*Փենենս*³/- Ա Եզր. Ը 32. «*Փենենսի որդիներից՝ Գերսոնը...*»:

Տարլընթերցումները բնայաշ չեն ոչ միայն հայերենին, այլև հենց հունարենին՝ *Յոթանասնիցք*-ին. Ըստ Աստվածաշնչի հայերեն բարգմանության ունենք *Անանիա* և *Անանիաս*, իսկ հունարենում՝ *Ανανι*/Ա Մնաց. Գ 24/, *Αννιας*/Ա Եզր.Ե 16/, *Ανανιας*/Դան.Ա 7/ *Ανανια*/Ա Մնաց. Գ 19/

Ահա մեր աշխատանքի կարևոր խնդիրներից մեկն է դառնում այդ հակասությունների ու տարլընթերցումների քննությունը, որը կայսր է այսպիսի տալ միմիայն համեմատության դեպքում, որոնցից յուրաքանչյուրին կանոնադաշտանք իր համապատասխան տեղում տվյալ անունը ներկայացնելիս: Բերենք ընդամենը մեկ օրինակ. *Հոդա*/Λουδα/ անվան նշանակությունն է՝ «*գովութիւն կամ խոստովանութիւն*» /ԲՅԱ, 168/, ըստ Ռ.Բերիաուսի՝ «*գովք*»/ԱԱ, 9/: Ըստ ԵՇ-ի՝ *хвала или прославленный*/190/: Անվան իմաստը գալիս է աստվածաշնչյան բնագրից. «*Եւ յղացաւ դարձեալ,*

⁸ Տես Գիրք Մակար... էջ107:

ծնաւ ոյտի, եւ ասէ. Չայս միւս անգամ գոհացայց զՏեառնէ, եւ կոչեաց զանուն նորա Յուդա»Ա-1/Ծն. ԻԹ 35/: Ա-2 և Ա-3 գրքերը ևս կրկնում են Ա-1-ին. «Այս անգամ պիտի գոհանամ Տէրոջմէն, անոր համար անոր անունը (գոհութիւն) Յուդա դրաւ ու դադարեցաւ ծնանելէն»: Այսինքն՝ ըստ հայերեն գրքերի՝ Աստվածաշնչի Յուդա անունը մեկնաբանվում է *գոհություն*, որն անշուշտ, տարբերվում է վերը բերված *գովք*, *խոստովանություն* իմաստներից և տրամաբանորեն առավել ճիշտն է:

Սուրբ Գրքի հատուկ անունները, հատկապես անձնանունները նույնությամբ չեն անցել այլ լեզուներ, այլ ենթարկվել են ուղղակի փոփոխությունների: Օտար լեզվական ազդեցությամբ ու տառալարծական կանոններով պայմանավորված՝ մեր լեզվում ստեղծվել են միևնույն անվան ուղղագրական, արտասանական տարբերակներ: Ահա թե ինչու աստվածաշնչյան անունների տառադարձությունն ու ուղղագրությունը, նաև քերականական որոշ առանձնահատկությունների քննությունը (հատուկ անունների հետ կապվող) դառնում են մեր ուսումնասիրության կարևոր հարցերից մեկը:

Առանձնակի կարևորություն ենք տվել աստվածաշնչյան անունների ռեական քննությանը, ուստի համեմատելու մյուս եզրը հայ բանաստեղծությունն է, հատկապես հայ հին և միջնադարյան հուգևոր բանաստեղծությունը, որոնց հեղինակները, լինելով հայ եկեղեցու կարկառուն դեմքեր, անուրանալի վաստակ ունեն *Աստվածաշնչի* ցանկացած նյութի մեկնության մեջ ընդհանրապես և մասնավորապես՝ հատուկ անունների: Ահա թե ինչու մանրամասն առանձնացված և քննարկված են հատկապես այն անունները, որոնք գործածվել են հայ մատենագրության, հատկապես բանաստեղծության մեջ:

Այս ուսումնասիրության արդյունքում որոշակիորեն փորձ կարվի նորմավորել աստվածաշնչյան անունները, բազմաթիվ ներլեզվական տարբերակներից ընտրել այն ճիշտ ձևը, որը համապատասխանում է արդի հայերենի լեզվական և մասնավորապես անվանաբանական նորմային: Դրանով իսկ ներկայացնել *Աստվածաշնչի* անվանաբանական նորմայի տեղն ու դերը ընդհանուր լեզվական նորմայում:

Զանի ուր մեր հիմնական նպատակը աստվածաշնչյան անունների քննությունն է՝ լեզվական, ծագումնաբանական, ստուգաբանական, պատ-

մական, ուստի նախ և առաջ կարևորել ենք բոլոր անունները ըստ հատկանվանագիտական եզրաբանության դասդասելը⁹:

Աշխատանքում հատուկ անունները ներկայացվում են հետևյալ համակարգմամբ,

Ա./ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ

Հատուկ անունները իրենց մեջ ներառում են երկու մեծ խումբ՝

ա/ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Որպես անձնանուններ են ներկայացվել՝

1.Արական և իգական բոլոր այն անունները (առանձին խմբերով), որ կրել են Աստվածաշնչի անձինք, այսպես՝ *Արգար, Եսթեր, Երեմիա, Թադևոս, Իսահակ, Շուշան Կեղար, Հաբեթ, Հեղի, Հոուր, Մադաբիա, Նաթանայել, Սողոմոն, Ռաբել, Քասպի* ևն:

2.Աստվածների անունները՝ *Եհովա, Հիսուս Քրիստոս* և նրանց անունների տարբերակներն ու նրանց անվանող այլ անուններ, այսպես՝ *Եհովա* անվան տարբերակն է *Յահվե, Եովա*, իսկ նրան անվանող այլ անուն է՝ *Եմ, Է. Հիսուս* անվան հետ մեկտեղ նա անվանվել է *Մանուել, Էմմանուել* և այլն:

3.Սուրբ Գրքում գործածվող բոլոր կուտքերի անունները, այսպես՝ *Աստարա, Բահադ, Բեհեդգեբուդ, Բելիար, Մեղքոմ, Մոդոր* ևն:

Այս նշված խմբերի բոլոր անունները քննում ենք՝ ըստ ծագման. որ լեզվից են անցել և ինչ տառադարձությամբ, ըստ իմաստի. աստվածաշնչյան անունները, լինելով շատ հին, անպայմանորեն որոշակի իմաստ են արտահայտում, և այդ իմաստը տրվում է հենց Սուրբ Գրքում, լեզվական. ուղղագրա-քերականական ինչ առանձնահատկություններն են դրսևորում, պատմական. ովքեր են այդ անունները կրող անձինք՝ քաղաքներ, մարգարեներ, քահանայապետներ, առաքյալներ, հրեշտակներ ու հրեշտակապետներ և այլն: Անպայմանորեն առանձնացված են արական և իգական անունները:

⁹ Աշխարհաբարի քերականության հիմնադիր Արսեն Այտնյանը իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ հատուկ անունները բաժանում է երկու խմբի՝ *գոյական հատուկ անուն*, որոնց տակ ներառում է անձերին և վայրերին տրվող անունները. այսինքն՝ անձնանուններ և տեղանուններ, և *ածական հատուկ անուններ*, որոնց տակ ներառում է մականունները. «Ածական յատուկ անուն ան է, որ որոշեալ անձի կամ տեղոյ մը վերաբերեալ կը ցուցնէ ինչպէս. Արտաշէսեան, Սոկրատեան, Մերաստացի, Արեւսական, Ռդոմայիսկան, որոնք տուածին չեն կրնար մնալ եւ հարկաւ գոյականի մը կը վերաբերին...»: Տես նշված աշխատությունը, Ե. 1987, էջ 29:

ԲՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Որպես տեղաճանաչում են ներկայացվել

1. Պետությունների, քաղաքների, գյուղերի այն անունները, որոնք հիշատակվում են *Աստվածաշնչում*, ինչպես՝ *Արաբիա, Բաբելոն, Գալիլեա, Իսրայել, Պաղեստին, Եգիպտոս, Բեթղեհեմ, Երուսաղեմ, Կանա, Մովաբ, Նազարեթ, Քանան, Թեման* ևն:

2. Գետերի, ծովերի, լճերի, հեղեղատների, աղբյուրների անունները, ինչպես՝ *Եփրատ, Կելդոն, Հորդանան, Բեթհեզդա, Մեռայ, Կարմիր ծով, Տիգրիս, Սովրեկ* ևն:

3. Լեռների, դաշտերի, հովիտների, բլուրների անունները, ինչպես՝ *Ահերմոն Արարատ, Բեթել, Գաղաադ, Գարիզիմ, Չիթենյաց լեռ, Հորդանան, Մովաբ, Նաբաթ* ևն:

4. Այն անունները, որոնք սկզբնապես/Աստվածաշնչում/ եղել են տեղաճանաչում, բայց ժամանակակից լեզվում չեն ընկալվում որպես հատուկ անուն, ինչպես՝ *Գեհեն, Եղեմ* :

Բ./ՀԱՏՈՒԿ ԱՆՎԱՆՈՒՄ

Դրանք այն անուններն են, որոնք տալիքներով են բուն հատուկ անուններից՝ պայմանականորեն կոչվելով *հատուկ անվանումներ*, այսպես՝ *Ավետիք, Աստվածաշունչ, Ավետարան, Երանելի, Ծննդոց, Սաղմոսարան, Սուրբ Գիրք, Երգ երգոց* :

Որպես հատուկ անվանումներ են ներկայացնում՝

ա/ԱՎԱՆՈՒՆՆԵՐ

1. Սրանք վերադիր անուններ են, որ կցվում են որևէ անձնանվան՝ դառնալով նրա համար, այսպես ասած, երկրորդ անուն, ինչպես՝ *Աստվածածին, Տիրամայր /Մարիամ/, Աստվածորդի, Միածին /Հիսուս/, Երանելի /Հոբ/* ևն:

2. Այն անունները, որոնք Աստվածաշնչում եղել են սուսկ մականուններ կամ հասարակ անուններ, սակայն, ունենալով առանձնահատուկ իմաստ, հետագայում դարձել են անձնանուններ, ինչպես՝ *Ավետիք, Կարապետ, Երանուհի, Սկրտիչ, Սերովբե, Քերովբե, Հարություն, Համբարձում, Օվսաննա* ևն:

3. Մականունների մի տեսակ են տեղաճանաչներից առաջացած վերադիր անունները, որոնք այսօր էլ ընկալվում են որպես հատուկ, ինչպես՝ *Նազովրեցի /Հիսուս/, Արիմաթացի /Հովսեփ/, Իսկարիոթացի /Հուդա/, Մագբաղենացի /Մարիամ/* ևն:

4.Անկանոնների այն տեսակը, որը տվյալ երկրի բնակիչ լինելն է ակնարկում կամ տվյալ երկրի ժողովուրդին, ինչպես *գերգեսացի, եգիպտացի, եբրայեցի, եթուսացի* ևն. դրանց անդրադարձել ենք մեյն աշխատանքում՝ հատուկ անոնների պատմական զարգացումը ցույց տալու համար, քանի որ դրանք ժամանակակից ըմբռնմամբ այլևս հատուկ անուն չեն :

4.Անկանոնների մի տեսակ պետք է համարել ազգանունները, ինչպես՝ *Ահարոնյան, Գաբրիելյան, Դավթյան, Շմավոնյան, Սողոմոնյան*, որոնք Սուրբ Գրքում արտահայտում են թե՛ մականվան, թե՛ ազգանվան նշանակություն :

բ/ ՈՃԱՆՈՒՆՆԵՐ

Ոճանունները այն հասարակ անուններն են, որոնք Սուրբ Գրքում ստացել են առանձնահատուկ իմաստ և ներկայացվել որպես հատուկ: Այդ անունները սուրբգրային և քանաստեղծական տեքստից դուրս այլևս հատուկ անուն չեն: Այսպես՝ *Աբրա, Սուրբ, Անկեզ մորենի, Ավետյաց լեռ, Կենաց ծառ* և այլն :

Սուրբ Գրքի անունները տարանջատել ենք երկու կարգի՝

1. Բուն աստվածաշնչային,
2. նաև Աստվածաշնչում հանդիպող:

Առաջինի տակ ներառվում են այն բոլոր հատուկ անունները, որոնք առաջին անգամ հանդես են եկել *Աստվածաշնչի* զանազան գրքերում. դրանք այն անձնանուններն են, որ կրել են Սուրբ Գրքի հեյտսները՝ նահապետներ, քագավորներ, առաքյալներ, մարգարեներ և այլն, աստվածների և կուռքերի անունները, այն բոլոր տեղանունները, որտեղ կատարվել են Աստվածաշնչում նկարագրվող մեծ և փոքր իրադարձությունները:

Երկրորդ խմբում ներառվում են այն անունները՝ անձնանուն թե տեղանուն, որոնք եղել են պատմության մեջ անկախ Աստվածաշնչից: Ասենք՝ *Ալ Մակեդոնացին, Դարեհ* անվանակիր քագավորները, *Հերովդեսները*, զանազան պետությունների ու քաղաքների անունները. *Ալեքսանդրիա, Եգիպտոս, Հոմաստան, Հռոմ, Պարսք* և այլն կհամարվեն նաև Աստվածաշնչում հանդիպող, քանի որ դրանց անունները հայտնի էին անկախ Աստվածաշնչից: Եվ քանի որ գրավոր հայերենի սկիզբը *Աստվածաշունչ* է, ուստի այս երկրորդ խմբում ներառված անուններն էլ առաջին անգամ գրավոր հայերենում ներկայացվել են հենց Սուրբ Գրքով: